ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Սպիտակ 13.04.2026թ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ֆրանգյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Այվազյան, Լ.Գասպարյան, Ա. Դիլբարյան, Մ. Սողոմոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ. Մամյան

**«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման մասին.**

**Ընդունել ի գիտություն, որ** գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում www.armeps.am համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «Արտ Պլաս» ՍՊԸ | Արարատի մարզ, գ. Շահումյան, Արցախի 5 |
| 2 | «Էդինգ» ՍՊԸ | ք. Վանաձոր, Վարդանանց, 1/4 |
| 3 | «Տիտան շին» և «Հազարաշեն» կոնսորցիում | ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փ. 3 շ.72 բն<br>ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Վ. Փոշոտյան 1 |
| 4 | «ՄՍԱ» ՍՊԸ և «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ | ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան Փ/Շ/6/8<br>ք. Չարենցավան, 4-րդ թ., 9-րդ շենք, բն. 5 |
| 5 | «Այպոշին» ՍՊԸ | ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 24/52 |

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները հետևյալն են՝

Չափաբաժին 1

Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի Ալեք Մանուկյան և Թումանյան փողոցների կոյուղագծերի կառուցման աշխատանքներ

| N | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/ | Առաջարկված գինը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | ԱԱՀ /ՀՀ դրամ/ | Առաջարկված գինը ընդհանուր /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Արտ Պլաս» ՍՊԸ | 30 433 300 | 16 650 000 | 3 330 000 | 19 980 000 |
| 2 | «Էդինգ» ՍՊԸ | | 19 074 070 | 3 814 814 | 22 888 884 |
| 3 | «Տիտան շին» և «Հազարաշեն» կոնսորցիում | | 19 603 280 | 3 920 656 | 23 523 936 |
| 4 | «ՄՍԱ» ՍՊԸ և «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ | | 19 900 000 | 3 980 000 | 23 880 000 |
| 5 | «Այպոշին» ՍՊԸ | | 20 520 000 | 4 104 000 | 24 624 000 |

Ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները՝

| N | Մասնակցի անվանումը | Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան կազմված լինելու մասին. |
|---|---|---|
| 1 | «Արտ Պլաս» ՍՊԸ | • Հավելված N 1-ում նշված է 2025թ. ներկայացված իրական շահառուների վերաբերյալ կայք-էջի հղումը, անհրաժեշտ է նշել 2026թ. ներկայացված կայք էջի հղումը: |
| 2 | «Տիտան շին» և «Հազարաշեն» կոնսորցիում | • Համատեղ գործունեության պայմանագրում աշխատանքների համար պահանջվող լիցենզիայի ներդիրի անվանումը նշված է սխալ,<br>• Հավելված N 1-ում իրական շահառուների վերաբերյալ կայք-էջի հղումները նշված են սխալ: |
| 3 | «ՄՍԱ» ՍՊԸ և «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ | • Բացակայում են հավելված 1.1-ը, համատեղ գործունեության պայմանագիրը, համապատասխան լիցենզիան /ներկայացվել է միայն ներդիրը/, փաստաթղթերը ստորագրված են միայն գործընկեր-1-ի կողմից, սակայն ներկայացված չէ փաստաթղթերը էլ. ստորագրողին տրվող համապատասխան լիազորագիր,<br>• Հավելված N 1-ում նշված իրական շահառուների վերաբերյալ կայք-էջի երկրորդ հղումը ակտիվ չէ: |

**«ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունները, որոշեց.**

1. Հիմք ընդունելով 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ Կառավարության N 526-Ն որոշման 41-րդ կետը, նիստը կասեցնել՝ «Արտ Պլաս» ՍՊԸ-ին, «ՄՍԱ» ՍՊԸ և «ԱՇՈՏ ԵՎ ՀԱՅԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ կոնսորցիումին, «Տիտան» Շին և «Հազարաշեն» կոնսորցիումին, առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2. «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 16.04.2026թ. ժամը՝ 10:00-ին ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 7 հասցեում:

Որոշումն ընդունվել է, կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________ Ա. Ֆրանգյան

Քարտուղար՝ ____________ Թ. Մանյան

Անդամներ՝ ____________ Մ. Այվազյան

____________ Լ. Գասպարյան

____________ Ա. Դիլբարյան